


ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆ

«ԹՈՒՐՔԸ ԶԻ ՃԱՆԱԶԵԼՈՒ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ...» (Հրանտ Մաթևոսյանը ցեղասպանության ճանաչման վերաբերյալ)



«Մեր վրեժը մեզ կործանում է, մեր անցյալի բեռնն տակ մեր փխրուն ուսերը փուլ են գալիս, մեն-միակ անգամ այս արև աշխարհ եկած մադու մեր ճանապարհը խտրություն, ստորություն ու կորչում է: Ավելի ուշ, բեյռուս Ալեք Ադամովիչի և թրքահայաստանի Հակոբ Մեծուրու ինքնություն ու գործի հարադրմանը, կարծեմ վաղ չտեսաբանեցի, մտավորապես այսպես այլ է երբ թիկունքդ սպանո եղբայրներդ ես անում և ֆաշիզմից հաշիվ պահանջում քո մոխրացած խառնիկի համար, և լիովին այլ երբ ապրում ես մի երկրում, ուր հերոսացում ու արձան են կանգնեցնում քո երեխայի ու ծնողի, ցուղի ու երկրի դահիճներին:

Այսպես էր ասվում ու այդուհանդերձ «սպանո եղբայրներով», միությանը ու ողջ աշխարհի համակրանքով ապահովված թիկունքի եթե ոչ վստահությունը գոնե վստահության հույսը կար, հայ պատմաբանը երբ երիտթուրքերը պատմության դատաստանի առջև կամ Գիլիկիա էր գրում գործություն, գործելու մի վրստահություն այնուամենայնիվ ուներ, ինչպե՞րիսի քաղաքացու ստատուսը մեզ խոսեցնում էր լրիվ ուրիշ լեզվով, - հիմա, ասում եք, լեզուս փոխելու է, երբ տիրակալությունը անդարձ հեռացել է, երբ Ադամովիչի «խատինը» կամ Ռոմմի «Մովսրակյան ֆաշիզմը» բորբոքվում են հայ մարդու իմ գործության սահմաններից անդին մենք մեր լեզուն փոխելու է ենք, միակգամից թրքացած այս աշխարհի առջև ա յլ լեզվով ու կեցվածքով են կանգնելու:

Խոսքս, խնդրեմ, պոետական սեթևեթանք մի համարեք, քանի որ պոետից լուրջ մարդ է եթե կա և դա հայ դիվանագետը, հայ քաղաքագետը, ազգային կուսակցություններն ու ողջ հանրությունն է ապա երկուսս էլ նույն պատի առջև ենք կանգնած, նույն շրջափակումի կայանքում ենք, և երկուսս էլ նույն առաջադրանքն

ունենք՝ ձեռքը փարախը: Բայց փարախը միայն մեզ համար է փարախ. նրանց համար, ովքեր փարախից անդին են, դեպի ուր կամ ում մենք ձգտում ենք դա ամենևին էլ փարախ չէ - արյունոտ ու անարյուն հաղթանակներով սահմանված պետական սահման է: Եվ թուրքը միայն ինձ համար է չարիքի խորհրդանիշ, ես միայն ինձ համար եմ գոհի խորհրդանիշ և նրանց համար գուցե բոլորովին հակառակն է, կամ նրանք դատում են թերևս ոչ այս խորհրդանիշերով, իրենց համար նրանք թերևս չարիքի-բարիքի, վտանգի-անվտանգի, վնասի-անվնասի այլ նշաններ ունեն, փոքրի մեր անվերջ տվայտանքը նրանց գուցե հոգնեցրել է, եթե ոչ իհարկե զգվեցրել: Հանդգնված լինենք միայն մի բանի մեջ, որ պաշարողներից անդին մեր արյան ու հավատի եղբայրները չեն կամ եթե նույնիսկ են խնդրի դժվարության առջև երես են դարձնելու մեզսից, անհասկացող են ձևանայու կամ անհասկանալի ենք լինելու իսկապես: Ճշմարիտ գիրքը հասու է յուրաքանչյուրիս ու բոլորիս, բոլորս ու յուրաքանչյուրս հասու ենք Ճշմարիտ գրքին. եթե այդ գիրքը համարում եմ լավ գիրք եղբորս մասին, եթե գիրք եմ համարում աղջկաս մասին վրիպած գիրք է. շարադրողն անագնիվ է եղել, և գիրքը նրան պատժել է ծնվել է մեռած, ճիշտ ինչպես բնագետը և իր փորձը, ինչպես վարդապետությունը և հասարակությունը, որ փոխադարձ պատիժների ամբողջ պատմություններ են թողել: Ճշմարիտ գրքի պես, բնագիտական խնդրի հրատակությամբ, հասարակությունից քաղված ու հասարակությանը դարձվող վարդապետության պես մեր վարքն ու ցեղասպանության մեր քաղաքականությունը պետք է կառուցվեն նախ և միայն ազնվության հիմքի վրա, ազնվության նախ և միայն խնդրո առարկայի հանդեպ, ազնվության մի տեսակ ինքը իր մեջ, ինքն իր համար, և այդ դեպքում ձեռքած կլինեն փարախը, հասկանալի կլինեն յուրաքանչյուրին ու բոլորին: Մի քիչ խարդախում, մի փոքր անճշտություն, բազում անհայտներով այդ հավասարման մեջ որևէ անհայտի բացթողում, և խնդիրը մեզ կպատժի, ինքն իրեն խնդիրը կպատժի:

Թուրքը, ոչ, չի ճանաչելու ցեղասպանությունը, չի ընդունելու թե ինքը ցեղասպան է, նրա կոմունիստը չի ընդունել և նրա ազգայնականը չի ընդունելու. ես ամեն առավոտ ծանր չկամությամբ եմ կանգնում պահանջատիրոջ իմ օրվա դեմ և նա նրա քաղաքագետը, պոետը, ուսանողը, դիվանագետը ինչու էր իր համար

հոգ դարձնելու իր մեծ ցեղի յուրաքանչյուր անդամին հիշեցնել թե սա մեղքի ու պարտքերի մեջ խրված է. թուրքն իր հոգը չի բաժանելու, իր ամբողջը չի կոտորակելու: Ուրեմն արժե ջանք ու քրտինք թափել մի քարի վրա, որ չի ճաքելու և հակառակը մեզ է ճաքեցնելու, բռնած գնալ ու գնալ մի բավիղով, որ էլքի նշան չի նշում: Չարժե, բայց չենք կարող չգնալ, ջանք ու քրտինք չենք կարող չթափել: Մի բան ստույգ կարող ենք և մտածել մեր երեխաների մասին և

կորզելիք մեր օգուտների մասին չէ և թշնամուն պատճառելիք մեր վնասների մասին չէ և ոչ անգամ դեպի արևելք նրա երթը խոչընդոտելու մասին և մեր իսկ հանդեպ մեր պահվածքի մասին է խոսքը. Ցեղովի խոսում ու գործում ենք հանուն ցեղասպանության ճանաչման, ցեղի մեծուփոքրով ծնկի ենք եկել մեր անթաղ մեռելների վրա և չենք տեսնում, որ հենց ցեղն ենք մայրում և ցեղի կարողությունն ու կենդանի շունչը արդարությամբ ու



չխելագարվել, ասել է մեզ չափի բերել, մեզ մեր չափին բերել, տեղավորել մեզ մեր բանականության սահմաններում, Աստծո օրվա առջև ետ քաշել սև վարագույրը մեր երեխաների դեմքից, ողբի ու տառապանքի պատ չկապել ողջ հանրության և յուրաքանչյուր անհատի շուրջը, միննույն է, նրանք գուլխներն այդ պահին ծեծելով չէ որ ապրում են, նրանք երգի ու օրհներգի իրենց օրվա մեջ ռևն ու ողբը մի համեստ անկյունում ծվարած են տեսնում:

Այսքանն ահա կարող ենք, և այսքանը քիչ չէ, բայց այսքանի առջև վրիպելը ներելի չէ, այնինչ վրիպում ենք, դարձյալ վրիպում ենք: Խոսքն այստեղ թշնամուց
Աստծով խոկում ու հատուցումն ու պահանջատիրությունն ենք հուսում և չենք տեսնում, որ սպառվում է ինքը պահանջատերը:
Պետք է մտածելիք պահանջատիրոջ մասին և ոչ պահանջատիրության: Պետք է սիրելիք այս Հայրենիքը, հոգայինք այսօրվա հոգսը: Այլապես հնարավոր է վաղը պահանջատիրությունը բավարարվի մեջտեղը պահանջատեր չլինի, մասնավոր որ այսպես մի անգամ արդեն եղել է. ձեզ Երզնկայից Շուշի երկիր ենք տալիս, բայց ժողովուրդ չունեք»:
«Չորրորդ իշխանություն», 2002 թ.

ՀԱՅՐԵՆԻՔ – ՄՓՅՈՒՈՔ

ՎԱՏԻԿԱՆՈՒՄ ՀԱՆԴԻՍԱՎՈՐՈՒԹՅԱՄԲ ԲԱՑՎԵԼ Ե ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՑՈՒ ԱՐՁԱՆԸ



Սուրբ Աթոռ կատարած պաշտոնական այցի շրջանակներում նախագահ Սերժ Սարգսյանը Վատիկանում վերջերս մասնակցել է «Տիեզերական եկեղեցու վարդապետ» հռչակված Աստվածաշնորհի Սուրբ Գրիգոր Նարեկացու արձանի բացման արարողությանը: Բացումը կատարել է Սուրբ Աթոռում Հայաստանի Հանրապետության արտակարգ և լիազոր դեսպան Միքայել Մինասյանը: Այս մասին հաղորդել են ՀՀ նախագահի մամուլի ծառայությունից:

Շուրջ երկու մետր բարձրությամբ բրոնզե արձանը ձուլվել է Չեխիայում, հեղինակը Հայաստանի ժողովրդական նկարիչ, քանդակագործ Դավիթ Երևանցին է, ճարտարապետը՝ Միքայել Հասարայանը: Այս նախաձեռնությունն իրականություն է դարձել Միքայել Մինասյանի և ռուսաստանաբնակ հայտնի գործարար Արթուր Զանիբեկյանի բարերարությամբ ու Սուրբ Աթոռում ՀՀ դեսպանության մշակույթի բաժնի պատասխանատու Վարդան Գարապետյանի կազմակերպական ջանքերի շնորհիվ: Արձանը պատրաստված է երկու օրինակից. մեկը տեղադրվեց Վատիկանում, իսկ երկրորդը կտեղադրվի համայն հայության հոգևոր կենտրոն Էջմիածնում:



Վատիկանի պարտեզներում արձանի հանդիսավոր բացումից հետո տեղի է ունեցել Էկումենիկ արարողություն՝ Հռոմի Սրբազան Քահանայապետ Ֆրանցիսկոս Պապի, Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Օսյարգոյն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսի ու Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսի մասնակցությամբ:

Վատիկանի պարտեզներում արձանի հանդիսավոր բացումից հետո տեղի է ունեցել Էկումենիկ արարողություն՝ Հռոմի Սրբազան Քահանայապետ Ֆրանցիսկոս Պապի, Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Օսյարգոյն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսի ու Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսի մասնակցությամբ: